ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/130

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մայիսի 2025 թ. N 130

«ՍՅՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Գրիգոր Արզումանյան 11ա**

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մայիսի 07-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՍՏՊՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 28 փետրվարի 2024 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 30 հունիսի 2024 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 29.09-02.10. 2024 թ
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 14 հունվարի 2025 թ.
թերությունների վերացման նախնական
ծրագրի ներկայացում՝ 18 մարտի 2025 թ.

ՍՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Գագիկ Քթրյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի եվրոպական համալսարանի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի որակի ապահովման բաժնի ղեկավար:
- **Գայանե Ավետիսյան՝** աշխարհագրական գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի Որակի ապահովման բաժնի պետ, փորձագիտական խմբի անդամ::
- **Նարինե Սիրականյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի Ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի պետ, , փորձագիտական խմբի անդամ:
- **Արնիկ Հովհաննիսյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողուհի,, փորձագիտական խմբի ուսանող-անդամ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Չի բավարարում
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՍՏՊՔ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. ՍՏՊՔ-ում առկա են բարելավման կարիք ունեցող ուղղություններ, որոնք վերաբերում են որակավորումների արժանահավատ շնորհման գործընթացին

Քոլեջի կողմից իրականացվող կրթական ծրագրերն ընդհանուր առմամբ համահունչ են հաստատության առաքելությանը: Քոլեջում առկա է համեմատաբար կայուն դասախոսական կազմ, որն ընդգրկում է նաև ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի դասախոսներ:

Միևնույն ժամանակ, կրթական ծրագրերի շարունակական արդիականացումը և գործատուների պահանջներին առավել հստակ համապատասխանեցումը պահանջում է աշխատաշուկայի պահանջների խորքային վերլուծություն՝ արտաքին շահակիցների ներգրավմամբ: Անհրաժեշտ է ապահովել, որ մասնագիտական պրակտիկաները կազմակերպվեն ոլորտային համապատասխանությամբ՝ հատկապես գործատուների բազայում, բարձրացնելու ուսանողների գործնական պատրաստվածության մակարդակը: Ուսանողների գնահատման գործող կանոնակարգերը նպատակահարմար է վերանայել՝ ընդգրկելով գործնական կարողությունների գնահատման հստակ մեխանիզմներ: Բացի այդ, կրթական ծրագրերի մշտադիտարկման և համեմատական վերլուծության (բենչմարքինգի) կիրառման ընթացակարգերի մշակումն անհրաժեշտ նախապայման է շարունակական բարելավման համար: Դասախոսների մասնագիտական զարգացման խթանման և մոտիվացիայի բարձրացման համար անհրաժեշտ է մշակել խրախուսման քաղաքականություն, ինչպես նաև ձևավորել պահուստային կադրային բազա՝ աշխատավարձի ցածր մակարդակով պայմանավորված նվազման ռիսկերին արձագանքելու նպատակով: Քոլեջի նյութատեխնիկական բազայի բարելավման ուղղությամբ նպատակահարմար է կատարել առկա ռեսուրսների գնահատում և կրթական ծրագրերի համար անհրաժեշտ նվազագույն պայմանների հաշվարկ:

II.Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, առկա են բարելավման ուղղություններ՝ ապահովելու արդյունահենք կառավարում

Քոլեջում ռազմավարական կառավարումն իրականացվում է հիմնականում իրավիճակային ձևով: Նպատակահարմար է ապահովել ռազմավարական կառավարումը տվյալահեն որոշումների վրա՝ զարգացնելով տվյալների հավաքագրման և վերլուծության կայուն մեխանիզմներ, որոնք կնպաստեն պլանավորման և մշտադիտարկման գործընթացների արդյունավետությանը: Խորհուրդ է տրվում ռազմավարական ծրագրում ներառել գործողությունների հստակ ժամանակացույց՝ խնդիրների լուծման իրատեսական քայլերը ապահովելու համար: Նպատակահարմար է նաև ապահովել շահակիցների համակարգված ներգրավվածություն ռազմավարական փաստաթղթերի մշակման փուլերում՝ բարձրացնելու դրանց իրագործելիությունն ու համահունչությունը համայնքի կարիքներին: Հաշվետվողականության մշակույթի զարգացման և թափանցիկության բարձրացման նպատակով նպատակահարմար է ապահովել կայացվող որոշումների և իրականացվող գործընթացների մասին տեղեկատվության հրապարակայնությունը՝ հասանելի դարձնելով այն շահակիցներին: Քոլեջի համար կարևոր է որակի ապահովման համակարգի կառուցումն ու դրա գործառույթների հստակեցումը՝ ներառյալ գործընթացների գնահատման մեխանիզմների ներդրումը և շահակիցների կարիքների փաստաթղթավորված վերլուծությունը:

III. Միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունն դեռևս չեն աջակցում որակավորումների արժանահավատ շնորհմանը

Քոլեջում առկա են որոշ միջազգային համագործակցություններ, որոնք սակայն ունեն համակարգման կարիք: Միջազգայնացումը ռազմավարական փաստաթղթերում չի դիտարկվում որպես առաջնահերթ ուղղություն, և բացակայում է համագործակցության հստակ քաղաքականություն: Խորհուրդ է տրվում քոլեջում զարգացնել միջազգայնացման ուղղությունը՝ ռազմավարական փաստաթղթերում ամրագրելով համապատասխան նպատակներ և մշակելով գործողությունների ծրագիր՝ ներառելով գործընկերների շրջանակ, համագործակցության ձևեր և պատասխանատուների դերաբաշխում: Նպատակահարմար է նաև խթանել օտար լեզվի ուսուցումը՝ դասախոսների և ուսանողների մասնակցությունը միջազգային համագործակցություններին ապահովելու նպատակով:

Դասախոսների և ուսանողների առջև դրված չէ հետազոտական աշխատանքներ իրականացնելու պահանջ: Այն արտացոլված չէ ոչ ռազմավարական ծրագրերում, ոչ էլ կրթական գործընթացում: Խորհուրդ է տրվում ռազմավարական մակարդակում ամրագրել հետազոտական բաղադրիչի ձևավորման ուղղությամբ գործողություններ՝ ներառելով ուսանողների մասնակցությամբ փոքրածավալ ուսումնասիրություններ և դասախոսների ներգրավվածությունը հետազոտական նախաձեռնություններում:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել 4 /չորս/ տարի պայմանով ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի հետո իրականացնել փորձաքննություն:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՍՏՊՔ Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույցը:
3. Թերությունների վերացման ծրագրում նախատեսել I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողություններ՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
4. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտը մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
5. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին մեկ տարի հետո պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՍՏՊՔ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ Վ. Գաբրիելյան

2025 թ., մայիսի 07